

**ԵՐԿԱԹԸ ԵՎ ԵՐԿԱԹԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ**

Մետաղը, ի մասնավորի երկաթը դեռևս վաղնջական շրջանից կարևոր տեղ էր գրավում տարբեր ժողովուրդների հավատալիքների համակարգում: Սա հատկապես ցայտուն էր արտահայտվում գութանային երկրագործների և նստակյաց անասնապահների տնտեսամշակութային տիպով բնութագրվող էթնիկական ընդհանրությունների հումանիտար մշակույթում: Գյուղատնտեսական աշխատանքների բոլոր ցիկլներում մետաղյա իրերի լայն կիրառումն ու փաստորեն մետաղյա գործիքների անփոխարինելի լինելու հանգամանքը պաշտամունքի աստիճանի էին հասցնում դրանք: Մետաղյա, հատկապես երկաթյա իրերը օժտվում էին գերբնական, վերերկրային հատկություններով, դառնում էին յուրահատուկ պահպանակներ, չարխափան միջոցներ, սրբազործված առարկաներ ու որոշակի ծիսական արարողությունների օբյեկտներ:

Սույն հրապարակմամբ կփորձենք վեր հանել երկաթի և երկաթագործական առարկաների հետ կապված հավատալիքային, ծիսական և պաշտամունքային մի շարք դրսևորումներ, որոնք վերաբերում են XIX դ. երկրորդ կեսը և XX դ. առաջին կեսն ընդգրկող ժամանակաշրջանին: Մեր խնդիրը չենք համարում դրանից վաղ շրջանին առնչվող բավականին հարուստ հնագիտական նյութի քննարկումը: Չնայած պարզ է, որ տվյալ ժամանակահատվածում հավատալիքների շերտերն իրենց արմատներով գնում են վաղ անցյալ՝ իրենց վրա կրելով մեր ժողովրդի պատմական զարգացման ընթացքի յուրաքանչյուր փուլին համապատասխան հավատալիքային համակարգերի և ծիսա-պաշտամունքային արարողությունների կնիքը:

Եթե դարբնի անձը հայոց ծիսակարգում հանգամանալիորեն ուսումնասիրված է ազգագրագետ Ա. Թադևոսյանի թեկնածուական թեզում<sup>1</sup>, ապա երկաթի և երկաթագործական առարկաների հետ կապված հավատալիքային համակարգն ու հայոց ծիսակարգում դրանց դերը կարոտ են ուսումնասիրության: Պատմագագրական գրականության մեջ և տարիների ընթացքում Հայաստանի տարբեր մարզերում և Ջավախքում մեր կողմից հավաքած դաշտային ազգագրական նյութերում<sup>2</sup> բազմաթիվ տեղեկություններ կան երկաթի և երկաթագործական առարկաների հետ կապված հավատալիքների վերաբերյալ, որոնք կփորձենք համատեղել՝ վեր հանելով դրանցից ամենատիպականներն ու լայն տարածում ունեցողները:

Մետաղագործության ցանկացած ճյուղում կենտրոնական (բառի ուղղակի և անուղղակի իմաստներով) տեղը գրավում է զնդանը, որը ոչ միայն բազմաֆունկցիոնալ հարմարանք է, այլև հնուց ի վեր սրբազործված ու բազմաթիվ ծիսա-պաշտամունքային արարողությունների հիմնական կրողը դարձած առարկա է: «Ձնդանը սուրբ է», «Ձնդանը հաց է տալիս», «Ձնդանի վրա հաց տվող գործիքներն են սարքվում», «Ձնդանը ժողովուրդ է կերակրում»<sup>3</sup> և բազում մնամատիպ բանաձևեր են օգտագործում երկաթագործ վարպետները զնդանի մասին խոսելիս:

Աշխարհի բազմաթիվ և այդ թվում նաև հայ ժողովրդական հավատալիքներում, զնդան-սալը նույնացվում է տիեզերքի կենտրոն կենաց ծառի, տիեզերքը կրող սյան հետ<sup>4</sup>, («մարդկանց ցեղի պորտն է սալը»)<sup>5</sup>: Հայոց հավատալիքներում երկնային ծագում ունեցող, երկնքի և երկրի ֆիզիկական կապն արտահայտող «շանթածին երկաթը» (երկաթի երկնային ծագման վերաբերյալ կխոսենք ստորև) կռում-կտվում են զնդանի վրա: Այստեղ երկնային դարբինն իր ծիսական պայքարն է մղում չար ուժերի ու դևերի հետ: Ցանկացած մետաղագործի զնդան ինքնին՝ աշխարհի ու մարդկության

<sup>1</sup> Ա. Թադևոսյան, *Դարբինը հայոց ծիսական համակարգում, թեկնատնախոսության սեղմագիր*, Եր., 1994:

<sup>2</sup> Գ. Աղաբաբյան, *Դաշտային ազգագրական նյութեր*, (այսուհետև՝ ԴԱՆ):

<sup>3</sup> ԴԱՆ, *Տավուշ 1986, Ջավախք 1986, Շիրակ 1985, Վայոց ձոր 2002 և այլն*:

<sup>4</sup> Ա. Թադևոսյան, *նշվ. աշխ.*, էջ 48:

<sup>5</sup> *Ձինագործ վարպետ Փ. Չիֆթալարյանի ձևակերպումն է, ԴԱՆ, Ախալցխա, 1986*:

պաշտպանությունն ապահովող իրերի արարման հարմարանք է: Համաձայն հնագույն պատկերացումների՝ զնդանը, որպես երկնքի և երկրի միացման, հատման կենտրոն, ապահովում ու կարգավորում է կյանքը երկրի վրա՝ թույլ չտալով քառասյին մութ ուժերին խառնաշփոթություն առաջ բերել Տիեզերքում: Հնդեվրոպական առասպելաբանության մեջ զնդան-սալի մեկ հարվածով կործանումը հնագույն տիեզերածին հավատալիքների արծարծումներն են՝ կապված վիշապասպան հերոսի կողմից տիեզերքի սյան կործանման և նրա գերմարդկային ուժի ցուցաբերման հետ: Չնդանն ամենաամուր և դիմացկուն երկաթից էր պատրաստվում, և հայ ժողովրդական հեքիաթներից մեկի հերոսը Չանփուլադին հաղթելու համար պետք է կռահի մեկ հարվածով փշրեր քառասուն տարի անխաթար մնացած սալը և այդ երկաթից պատրաստեր երկնային դարբնի հրաշագործ մուրճը:<sup>6</sup> Չնդանի վրա մի կողմից կռում են աշխարհակործան չարի կապանքները, պահպանակներն ու չարխափան առարկաները, մյուս կողմից արարվում են կենսատու աղբյուր հանդիսացող երկրագործական, անասնապահական ու արհեստավորական գործիքները:

Հայաստանի բոլոր պատմագագագրական շրջաններում երկաթագործների մեջ սովորույթ կար ամեն երեկո տուն գնալուց սրբել զնդանի երեսը և խաչակնքել այն:<sup>7</sup> Հետաքրքիրն այն է, որ երկաթագործի և ոչ մի գործիք բացի զնդանից չէր սրբվում: Չնդանի նկատմամբ այսպիսի «փաղաքշական վերաբերմունքը» կապված էր նաև այն պատկերացումների հետ, թե նրա երեսը պետք է նույնքան մաքուր լինի, որքան դարբնինը: Ինչպես զնդանի երեսը մաքուր պիտի նայի աշխարհին, այնպես էլ նրա տեր արհեստավորը:<sup>8</sup> Պատահական չէ, որ ժողովրդի մեջ արմատավորված է այն կարծիքը, որ դարբնները ամենաճշմարտախոս, «շիտակ» ու «տյուզ» մարդիկ են:<sup>9</sup> Չնդանը սրբագործված, ծիսական ու կրոնական արարողությունների իրականացման հարմարանք էր, և նրանով երդվում էին բոլոր երկաթագործները: Ամեն շաբաթ երեկոյան երկաթագործ վարպետները զնդանի վրա (այլ արհեստավորներ՝ դազգահի) մոմ էին վառում, իսկ հարուստ համբարային ավանդույթներով հայտնի քաղաքներում նաև «... խումկ էին ծխում եւ «ողորմի» հիշում «փիրաց-վարպետաց» հոգուն»:<sup>10</sup> Այս սովորույթը պահպանվել էր ընդհուպ մինչև XX դ. կեսերը և խորհրդային աթեիստ դեկավարներից թաքուն՝ երկաթագործ վարպետները և՛ մոմ էին վառում, և՛ խաչակնքում, և՛ աղոթք մրմնջում:<sup>11</sup> Մեր բանասաց երկաթագործ-վարպետ Բարասենց Ալբերտը (Վայոց ձորի Մարտիրոս գյուղ) հիշում էր, որ նախնիների անվանի պայտագործ-վարպետ Խուրդն զնդանի վրա ավելի հաճախ էր մոմ վառում, քանի որ եկեղեցիները փակված էին: Վարպետ Խուրդի զնդանի վրա աղոթեջանական իշխանություններից զաղտնի մոմ էին վառում և աղոթում Նախնիների հավատավոր հայերից շատերը:<sup>12</sup> Մա փաստորեն այսպես կոչված՝ «ժողովրդական քրիստոնեության» հետաքրքիր դրսևորումներից էր և «անաստված» հասարակարգում հավատացյալ մարդու կրոնական պահանջմունքների ծայտյալ իրագործման հետաքրքիր օրինակ: Չնդանն այս պարագայում ստանում էր Սուրբ սեղանի կամ խորանի նշանակություն: Ինչպես չէր կարելի մեջքով կանգնել դեպի Սուրբ սեղանը կամ հենց պարզագույն «հացի սեղանը», այնպես էլ խստիվ արգելված էր մեջքով դառնալ հանդեպ զնդանը: Ամենամեծ մեղքն էր համարվում զնդանին նստելը, որն հավասար էր թե՛ «նստել հաց արարող սեղանին»: Եթե որևէ մեկը փորձեր նույնիսկ անգիտակցաբար նստել զնդանին, ապա երկաթագործն անխոս ու բա-

<sup>6</sup> E. З а к а р я н, Кузнец в армянской сказке, в. кн. Археология, этнология и фольклористика Кавказа, св. Эчмиадзин, 2003, стр. 360.

<sup>7</sup> Խ. Մ ա ն ա ն կ յ ա ն, Էրզրումի և Կարսի արհեստավորների համայնական կարգերը, «Մշակ», 65, 1891: Նույնպիսի տեղեկություններ կան նաև մեր կողմից հավաքած դաշտային նյութերում:

<sup>8</sup> Անվագործ վարպետ Հովհաննեսի (Վալտսնիկ Օնիկ) ձևակերպումն է, ԴԱՆ, Լենինական, 1984, տետր 1:

<sup>9</sup> ԴԱՆ, Լենինական, 1984, տետր 1: Տավուշ, 1986, տետր 2: Վայոց Ձոր, 2002, տետր 1:

<sup>10</sup> Խ. Մ ա ն ա ն կ յ ա ն, նշվ. աշխ.:

<sup>11</sup> ԴԱՆ, Լենինական, Վայոց ձոր և այլն:

<sup>12</sup> ԴԱՆ, Վայոց ձոր, տետր 1:

վականին խիստ ձևով կհեռացներ այդ «սրբապիղծ» մարդուն (վարպետը կարող էր ձեռքն ընկած ցանկացած առարկայով հարվածել զանցառուի «քամակին»)։<sup>13</sup>

Ինչպես և շատ անշունչ առարկաներ, այնպես էլ երկաթագործի գործիքներն ու հարմարանքները շնչավորվում, ավելի ճիշտ՝ մարմնավորվում էին։ Ջնդանի վերին հատվածն առանց բացառության անվանվում է «երես», իսկ մյուս մասերը տարբեր պատմագագազրական շրջաններում ունեին տեղական անվանումներ, որոնց իմաստը մոտավորապես նույն միտքն էր արտահայտում։ Ջնդանի եղջյուրածև ելուստը կոչում էին «պոզ» (Տավուշ), «կոտոշ» (Շիրակ-Ջավախք), իսկ հակառակ կողմի բութ հատվածը՝ «դմակ» (Տավուշ), «ոռ» (Ջավախք, Շիրակ, Վայոց ձոր), իրանը հիշվում է «ջան» կամ «մեջք» անուններով։<sup>14</sup> Ջնդանի շնչավորումը պատահական չէր, քանի որ դարբնի պատկերացումներով՝ այն «լսում» ու «ձենով»<sup>15</sup> պատասխանում էր արհեստավորին։ Դարբնությունը «համր», հատուկ նշանների «լեզու» բանեցնող արհեստ էր,<sup>16</sup> և աշխատանքի ընթացքում լսվում էր միայն զնդանից արձակվող զրնգոցը, որը «պատասխանում» էր վարպետին, թե որքանով են ճիշտ ու դիպուկ տեղացող հարվածները։ Արհեստի տեխնիկա-տեխնոլոգիական պահանջներին համապատասխան՝ իսկապես զնդանի որակը ստուգվում էր մուրճի հարվածներից հետո արձակված ձայնի հնչեղությամբ և միայն վարպետներին հասկանալի զնգոցի որակով։<sup>17</sup>

Երկաթագործ բոլոր վարպետները հնուց ի վեր պահպանել էին բոլոր պատմագագազրական մարզերում հանդիպող մի հետաքրքիր սովորույթ, որը կապում էին Արտավազդ արքայի հետ։ «Շաբաթ երեկոները,- գրում է Խ.Մատանկոյանը,- դարբինները գործն ավարտելով մուրճով խփում էին սալին... Ժողովուրդը կարծում է, թե տոն օրերին, երբ երկաթագործները չեն բանում՝ այդ (Արտավազդի - Գ.Ա.) շրթաները բավական մաշվում են և շաբաթ երեկոյան խփած մուրճը ծառայում է հայ Պրոմեթևսի շրթաները ամրապնդելու համար, որպեսզի նա չազատվի և աշխարհը չքանդե»։<sup>18</sup> Նույն կերպ էին վարվում Ջանգեզուրի դարբինները. «...այստեղ ամեն շաբաթ երեկո նա (դարբինը-Գ.Ա.) աշխատանքն ավարտելիս մեծ մուրճով՝ *զնդանով*, զարկում էր դատարկ սալին չար Արտավազդի շրթաներն ամրացնելու համար»։<sup>19</sup> Այս սովորույթը բավական հյութեղ նկարագրում է Պերճ Պռոշյանն իր «Մոս և Վարդիթեր» վեպում. «Ուրբաթ քշերը արլորիցն առաջ դարբիններն անխոսալ իրանց դուքանները բաց արին, զնդաններին երեք հատ չաքչեցին, որ Արտավազդի զնջիլն հաստանա, չի կարենա դուս գալ աշխարհքը քանդել, տակնուվրա անել ու էլ շինեցին դուռը, գնացին ժամ կտակ լսելու»։<sup>20</sup> Անհրաժեշտ է նշել, որ մեր վիպասանն այս սովորույթը նկարագրելիս մեկտեղել է երկու միմյանցից բավական տարբեր ծիսական արարողություններ։ Ավազ Ուրբաթ դարբինների և ընդհանրապես բոլոր մետաղագործների (օրինակ Շուշիում ոսկերիչներն էլ էին պահպանակ երկաթյա մատանիներ պատրաստում<sup>21</sup>) կատարած ծիսական աշխատանքը կապ չունեի հայոց հեթանոս արքայի շրթանների հետ, այլ առնչվում էր քրիստոնեական ինչ-ինչ պատկերացումների հետ, որոնց մասին կխոսենք ստորև։ Արտավազդի «շրթանների ամրացումը» հայ երկաթագործների ամենշաբաթյա սրբազան պարտականությունն էր և կատարվում էր սիստեմատիկորեն։ Մովսես Խորենացու հիշատակած «միաշաբթի»<sup>22</sup> օրը (կիրակի- Գ. Ա) երկաթագործների կատարած ծիսական արարողությունը պահպանվել էր ընդհուպ մինչև XX դ. կեսերը։ Ալեքսանդրապոլի երկաթագործները բացի շաբաթ երեկոյից, հաջորդ՝ կիրակի առավոտյան ևս

<sup>13</sup> Գ.Ա.Ն., Վայոց ձոր, նույն տեղում։

<sup>14</sup> Գ.Ա.Ն., Տավուշ, Ախալցխա և այլն։

<sup>15</sup> Գ.Ա.Ն., Ախալցխա, 1986, տետր 1։

<sup>16</sup> Գ. Ա. Ն. և յ ա ն, Երկաթագործական արհեստները հայոց մեջ, ԵՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 2, Գյումրի, 1999, էջ 172։

<sup>17</sup> Գ.Ա.Ն., Լենինական, տետր 1։ Վ. Թեմուրճյան, Գամիրքի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, պր. 1, Եր., էջ 54։

<sup>18</sup> Խ. Մ ա ն և կ ղ յ ա ն, նշվ. աշխ.։

<sup>19</sup> Մո. Լ. ի ս ի ց յ ա ն, Ջանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 166։

<sup>20</sup> Պ. Պ. Ն. յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1974, էջ 68։

<sup>21</sup> Ե. Լ. ա լ ա յ ա ն, Երկեր, հ. 2, Եր., 1988, էջ 200։

<sup>22</sup> Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, գլ. Ա, լր.։

բացում էին արհեստանոցը և երկու-երեք անգամ «չաքչքում» էին զնդանին, այնուհետև զնում էին եկեղեցի պատարագի:<sup>23</sup> Չարքերի ձեռքով շղթայված հերոսի (Արտավազդ կամ Շիրար)<sup>24</sup> գալստյան սպասումը և նրա շղթաների անընդհատ ամրացումը, աշխարհի փրկության կամ կործանման, չարի ու բարու պայքարի հնավանդ պատկերացումների արդյունք է, որը դեռևս Մդ. ծաղրանքի տեղիք էր տվել Եզնիկ Կողբացուն. «Նոյնպես եւ մոլորութիւնն դիսաց խաբեաց գղիցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելանելոց է ունելոց զաշխարհս, եւ ի սնուտի հոյս կապեալ կան անհաստք...»<sup>25</sup>

Չնդանի չարխափան ու մաքրագործող ֆունկցիաների արտահայտություններից է նաև հայ բանահյուսության մեջ հանդիպող ծիսական ծննդաբերության նկարագրությունը, երբ իր արգանդում «Ջանփոլադի» հոգին կրող հեքիաթի հերոսուհուն ծննդաբերության ժամանակ դևերը նստեցնում են շիկացած զնդանի վրա:<sup>26</sup> Չնդանն այստեղ հանդես է գալիս որպես քաջքերի ու դևերի խարդավանքները չեզոքացնող հարմարանք: Սրբագործված զնդանը հանդիպում է նաև հայոց հարսանեկան ծիսական ցիկլի, և ինչպես վերը նշվեց, նաև տղաբերքի սովորույթների մեջ: Հայ ժողովրդական հեքիաթներից մեկում հարսանիքից առաջ արքայադաստերը օծում են կամ ավելի ճիշտ ձևում են սալի վրա:

Երկաթագործի գործիքների մեջ ամենահարգվածներից ու սրբագործվածներից էր մուրճը: Դարբնի մուրճը ոչ միայն ունիվերսալ ու առաջնային անհրաժեշտության գործիք էր, այլև ծիսական նշանակություն ունեցող իսկական «զենք», որը չարին կործանող սրի նշանակություն էր ստանում: Երկնային երկաթագործի մուրճը փշրում էր չարքերին ու դևերին, մուրճի հարվածները պահպանում էին մարդկանց չար ուժերից ու հեռու քշում նրանց: Մուրճի հարվածի արձակած զոնգոցը զգուշացնում էր դևերին, որ տվյալ գյուղում կամ քաղաքում կան դարբնոց ու դևերին սպանող երկնային դարբնի, և չարը չէր փորձում մտնել այդ բնակավայրը:<sup>27</sup> Մուրճի հարվածի հզորությունը նույնացվում էր առասպելական հերոսի սրի հարվածին: Ինչպես զնդանը՝ մուրճը ևս, շնչավորված, մարմնավորված գործիք է դարբնի համար: Վարպետ երկաթագործը հատուկ փառաքշական վերաբերմունք ուներ մուրճի նկատմամբ: Ոչ ոք իրավունք չուներ այլ նպատակով օգտագործել վարպետի բանող մուրճը՝ մեխ խփել և այլն: Ինչպես ասենք դերձակները թույլ չէին տալիս իրենց մկրատով եղունգ կամ այլ նյութեր կտրել, այնպես էլ երկաթագործ վարպետները օտարից հեռու էին պահում իրենց «հաց վաստակող» գործիքը:

Ոչ պակաս ծիսական նշանակություն ուներ նաև քուրան (բովք, հալոցք), որը երկաթագործական աշխատանքների տեխնիկա-տեխնոլոգիական ցիկլի կենտրոնական դերակատարներից էր: Քուրան խորհրդանշում էր օջախի, տան կրակի ու ջերմության պաշտամունքը:

Երկաթագործի մյուս գործիքներն ու հարմարանքները (փուքս, ունեղներ, աքցաններ, ծակիչներ և այլք) չունեին ծիսական այն արժևորումը ինչ վերը բերվածները:

Հայ ժողովրդական հավատալիքներում կարևոր տեղ ունեն երկաթե իրերը, որոնց ծիսական նշանակությունը կապված է հայոց տոնացույցի որոշակի ցիկլերի հետ: Սրանցից ամենահայտնին «ուրբաթարուներն» են, որոնց ծիսական-պահպանական նշանակությունը բավական հանգամանալի մեկնված է հայ պատմագագարական գրականության մեջ: Չատկի տոնի Ավագ ուրբաթ օրը հայ երկաթագործները անխոստ (այստեղից էլ «ուրբաթախոստ» անվանը), «անժմի»՝ գյուղի կամ քաղաքի յոթ թաղերից հավաքված երկաթից պատրաստում էին հիմնականում կիսալուսնաձև կամ հայկական պայտի նման բարակ ու թեթև զարդեր, որոնք իրենց վրա բացված անցքերի միջոցով կարվում էին «լուսնով», «ղիվոտությամբ» և այլ հիվանդություններ ունեցող երեխաների շորին:<sup>28</sup> Ավագ ուրբաթ ոչ մի երկաթագործ իրավունք չուներ աշխատելու, սակայն

<sup>23</sup> ԳԱՆ, Լենինական, տետր 1:

<sup>24</sup> Ա. Թ ա դ և ն ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 13:

<sup>25</sup> Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Եր., 1994, էջ 85-86:

<sup>26</sup> E. З а к а р я н, Кузнец в армянской сказке, стр. 361.

<sup>27</sup> ԳԱՆ, Ջավախք, Լենինական և այլն:

<sup>28</sup> Խ. Մ ա ն ա ն կ ո զ յ ա ն, նշվ. աշխ.: Ե. Լալայան, նշվ. աշխ. և այլն:

«ուրբաթարուրն» ու Հուդայի աչքը փորելու մեխերը անպայման պատրաստվում էին<sup>29</sup> ու անմիջապես դարբնոցը փակվում էր: Ա. Թադևոսյանը, կապելով այս երևույթը ծննդի և զարթոնքի հետ,<sup>30</sup> պնդում է, որ «ուրբաթարուրներ» կրում էին հարսներն ու հղի կանայք: Սակայն մեր կողմից տարբեր պատմագագագրական շրջաններում գրանցված նյութերում վերոհիշյալ կանայք կրում էին երկաթե մատանի, ապարանջան կամ էլ «դող»: Մատանու կամ ապարանջանի շրջանակը խորհրդանշում էր տիեզերքն ու երկնային լուսատուների անընդհատ շրջափուլը, որը հնարավորություն էր տալիս չար ուժերից պահպանել նոր կյանք արարող կնոջը: Նմանօրինակ գործառույթ էր վերագրվում նաև երկաթե վզնոց-«դողին», որն առավել լայն կիրառում ուներ, քանի որ «դող» կրում էին և՛ կանայք, և՛ տղամարդիկ, և՛ մանուկները:<sup>31</sup> Ինչպես «ուրբաթարուրները»՝ «դողերը» ևս, պատրաստվում էին «անժմի» երկաթից, սակայն վերջիններս պատրաստվում էին ողջ տարվա ընթացքում և կախված չէին տոնական ցիկլի որևէ փուլի հետ: «Դող» կրել խորհուրդ էր տրվում վախեցած, «դիվոտած» կամ էլ փորձանքի ենթարկված մարդկանց:<sup>32</sup>

Երկաթագործի պատրաստած իրերից հետաքրքիր ծիսական նշանակություն ունեին նաև պայտերը, որոնք հատկապես XIX-XX դդ. լայնորեն օգտագործվում էին՝ տան դրսի դռանը կամ դարպասին խփելով չար աչքից ու չար մտադրություններից օջախը պահպանելու նպատակով: Չարխափան կարող էին լինել միայն օգտագործված-մաշված և հիմնականում ձիու պայտերը, որոնք նույնիսկ օրհնել էին տալիս քահանային:<sup>33</sup> Պայտի պարագայում ևս գործում էր անընդհատ շրջանի և տիեզերքի պատկերավորման գաղափարը: Սա հատկապես ցայտուն է երևում «հայկական պայտերի» արտաքին պատկերում:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ երկաթագործը և երկաթագործական գործիքներն ու առարկաները իրենց ուրույն տեղն են գրավել հայ ժողովրդի տոնածիսական կյանքում և հավատալիքներում, որոնց արմատները ոչ միայն բնիկ հայկական, այլև համընդհանուր առաջավորասիական են և անշուշտ գնում հասնում են վաղնջական շրջան:

## ЖЕЛЕЗО И ЖЕЛЕЗНЫЕ ПРЕДМЕТЫ В НАРОДНЫХ ВЕРОВАНИЯХ АРМЯН

\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_ Г. Агабян \_\_\_\_\_

В статье сделана попытка характеризовать место и роль железа и железных предметов в обрядово-ритуальном цикле армян, а также в народных верованиях. Личность железных дел мастеров и сделанные ими предметы имеют особое ритуальное значение, а верования, связанные с ними, своими корнями уходят в глубь веков. Особое внимание уделено ритуальному значению наковальни как центра мироздания и основы ствола древа жизни.

<sup>29</sup> Ա. Թադևոսյան, նշվ. աշխ., էջ 14: Խ. Մատանկոյան, նշվ. աշխ.: Ե.Լալայան, նշվ. աշխ.: ԳԱՆ, և այլն:

<sup>30</sup> Ա. Թադևոսյան, նշվ. աշխ., էջ 14-15:

<sup>31</sup> ԳԱՆ, Վայոց ձոր, Տավուշ:

<sup>32</sup> Նույնը:

<sup>33</sup> ԳԱՆ, Լեռնական, տետր 2: Այս սովորույթը պահպանվում է նաև մեր օրերում: